ՀԻՆԳ ՔԱՐ՝ ՀՍԿԱՆԵՐԻ ԴԵՄ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Ա ԹԱԳ. 17.40-54

40 Դավիթը իր մահակը ձեռքն առավ, հեղեղատից հինգ գայլախազ քարեր ջոկեց իր համար և դրանք դրեց իր հովվական ամանի, այսինքն՝ մախաղի մեջ, և պարսատիկը ձեռքին՝ մոտեցավ փղշտացուն:

45 Եվ Դավիթն ասաց փղշտացուն. Դու ինձ վրա սրով, նիզակով և տեգով ես գալիս, իսկ ես քեզ վրա գալիս եմ Իսրայելի զորքերի Զորությունների Տիրոջ՝ Աստծու անունով, որին դու նախատեցիր: 46 Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, և ես կսպանեմ քեզ ու գլուխդ կկտրեմ քո վրայից և փղշտացիների բանակի դիակներն այսօր կտամ երկնքի թռչուններին ու երկրի գազաններին, որպեսզի ամբողջ երկիրն իմանա, որ Իսրայելն Աստված ունի: 47 Եվ այս ամբողջ բազմությունն իմանա, որ Տերը սրով ու նիզակով չէ, որ ազատում է, որովհետև այս պատերազմը Տիրոջն է, և նա ձեզ պիտի մատնի մեր ձեռքը: 48 Եվ երբ փղշտացին վեր կացավ ու գալիս էր Դավթի դեմ և մոտեցավ նրան, Դավիթն էլ արագ վազեց պատերազմի ասպարեզը՝ փղշտացուն դիմավորելու: 49 Եվ Դավիթը իր ձեռքը կոխեց մախաղի մեջ, այնտեղից մի քար առավ և պարսատիկով նետեց այն ու զարկեց փղշտացու ճակատին. քարը խրվեց նրա ճակատի մեջ, և նա երեսնիվայր ընկավ գետին:

51 Եվ Դավիթը վազեց, կանգնեց փղշտացու վրա, բռնեց նրա սուրը, հանեց պատյանից, սրով սպանեց նրան և ապա սրով կտրեց գլուխը:

- *Հինգ քարերը հոգևոր զենքեր են, որոնք Աստված այսօր էլ տալիս է Իր ժողովրդին:*

  40 *հեղեղատից հինգ գայլախազ քարեր ջոկեց...*

I. ՔԱՐ #1 – ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ

- ***Ներքին հարձակումներ Դավթի վրա.***

  Եղիաբը մեղադրում էր Դավիթին Հպարտության մեջ

  Սավուղը չի հավատում նրա կարողությանը

  Գողիաթը ծաղրում է նրա արտաքին տեսքը

- ***Դավիթի որդիական ինքնությունը «ՏԵՐԸ ԻՄ...»***

  Տերը ԻՄ բաժինն է և իմ գավաթը (Սաղ. 16.5)

  Տերը ԻՄ ժայռն է, իմ բերդը և իմ ազատիչը... իմ վահանը (Սաղ 18.2)

  Տերը ԻՄ Հովիվն է... (Սաղ. 23.1)

  Տերը ԻՄ լույսն է և իմ փրկությունը, ումի՞ց վախենամ (Սաղ. 27.1)

  Տերը ԻՄ զորությունն է և իմ վահանը (Սաղ. 28.7)

  Տերն է ԻՄ ժայռը և իմ փրկությունը (Սաղ. 62.2)

  Տերը իմ զորությունն է և իմ երգը... (Սաղ. 118.14)

Դավիթը չէր ասում՝ «ՏԵՐԸ լույս է», Նա ասում էր՝ «ՏԵՐԸ ԻՄ լույսն է»

«Նույն սկզբունքը մենք տեսնում ենք նաև Հիսուսի կյանքում. թշնամու հարձակումը ուղղված էր Նրա ինքնության դեմ»:

Եվ ահա երկնքից ձայն լսվեց, որ ասում էր. Դա է իմ սիրելի որդին, որ ունի իմ բարեհաճությունը (Մատ. 3.17):

Բայց անմիջապես հետո.

փորձիչը, նրան մոտենալով, ասաց. ***ԵԹԵ*** *Աստծու Որդին ես, ասա՛... (Մատ. 4.3)*

Նույն արձագանքը խաչի վրա.

ԵԹԵ *Աստծու Որդին ես, իջի՛ր խաչից (Մատ. 27.40):*

- ***Սատանան ամեն օր նույն կերպ հարձակվում է մեր ինքնության վրա.***

  Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ մենք ***<u>ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐ ԵՆՔ</u>*** *(Հռոմ. 8.16-17):*

II. ՔԱՐ #2 – ԱՂՈԹՔ ԸՆԴԴԵՄ ԹՄՐՈՒԹՅԱՆ (ՀՈԳԵՈՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ)

Շատ աստվածաբաններ նշում են, որ Դավիթի գրած Սաղմոսներից ավելի քան 50-ը հստակ աղոթքներ են*:*

Իրիկուն ու առավոտ և կեսօրին աղոթում եմ ու հառաչում, և նա կլսի իմ ձայնը (Սաղ. 55.17)

Իմ աղաչանքը թափում եմ Նրա առաջ, իմ նեղությունը պատմում եմ Նրանե (Սաղ. 142.2)

Իմ նեղության մեջ Տիրոջը կանչեցի... և Նա լսեց (Սաղ.18.6)

- ***Դավիթը չէր հաղթում հսկաներին հրապարակում, եթե չհաղթեր ծուլությանը իր ծածուկ սենյակում:***

Չկարողացա՞ք մեկ ժամ արթուն մնալ ինձ հետ (Մատ. 26)

- *Իսրայելի բանակը ֆիզիկապես զինված էր, բայց հոգևորապես քնած:*

III.ՔԱՐ #3 – ՔԱՋՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՎԱԽԻ (ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ)

48 *Եվ երբ փղշտացին վեր կացավ ու գալիս էր Դավթի դեմ և մոտեցավ նրան, Դավիթն էլ արագ վազեց պատերազմի ասպարեզը՝ փղշտացուն դիմավորելու:*

Բոլորը նահանջում էին

Դավիթը վազեց դեպի ճակատամարտը

Բ Տիմոթեոս 1.7 – Որովհետև Աստված մեզ վախի հոգի չտվեց, այլ զորության, սիրո և ողջամտության:

Հեսու 1ում «Քաջ եղիր և զորացիր» արտահայտությունը բառացիորեն կրկնվում է մի քանի անգամ...

Հեսու 1.6 – «Քաջ եղիր և զորացիր...»

Հեսու 1.7 – «Միայն թե զորացի՛ր և շատ քա՛ջ եղիր...»

Հեսու 1.9 – Ահա պատվիրում եմ քեզ, զորացի՛ր և քա՛ջ եղիր, մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր էլ որ գնաս:

Հեսու 1.18 «...Միայն թե զորացի՛ր և քա՛ջ եղիր»:

- ***Հավատքը չի ժխտում վախը, այն հաղթահարում է վախը:***

IV.ՔԱՐ #4 – ՀԱՎԱՏՔ ԸՆԴԴԵՄ ԵՐԿՄՏՈՒԹՅԱՆ

45 *Եվ Դավիթն ասաց փղշտացուն. Դու ինձ վրա սրով, նիզակով և տեգով ես գալիս, իսկ ես քեզ վրա գալիս եմ Իսրայելի զորքերի Զորությունների* ***Տիրոջ՝ Աստծու անունով****, որին դու նախատեցիր...*

- ***Հավատքը հռչակում է հաղթանակը դեռ մինչ քարն արձակվելը:***

Եբր. 11.6 – Բայց առանց հավատի անկարելի է Աստծուն հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, որ նա կա և իրեն փնտրողներին վարձահատույց է լինում:

Ա Հովհաննես 5.4 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ ***մեր հավատը****:*

Հակոբոս 1.6-8 – Միայն թե թող նա հավատով խնդրի, առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծ ու տատանվող ալիքներին:

V. ՔԱՐ #5 – ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Հով.17.17 – «Քո խոսքը ճշմարտություն է»

Հայտ. 19 – Նրա անունը կոչվում է Աստծու Խոսք... նրա բերանից սուր է ելնում

- ***Հիշեք որ Դավիթին մեղադրում էին՝ Հպարտության, Թուլության և Անփորձության մեջ***

Բայց Դավիթը ինքն իրեն չպաշտպանեց այլ Ճշմարտությունը նրան պաշպան եղավ:

Սաղմոս 91.4 – Նրա ճշմարտությունը վահան և զրահ է

Մատթեոս 4.4, 7, 10– «Գրված է...» (Հիսուսը ճշմարտությամբ հաղթում է փորձիչին)

Հայտ. 12.11 – «Հաղթեցին… իրենց վկայության խոսքով»

- ***Մի՛ վերցրու թշնամու մեղադրանքները անձնական***

  «...Գողիաթը կրկնեց իր ասած խոսքերը, և Դավիթը լսեց դրանք» «Ո՞վ է այդ անթլփատ փղշտացին, որ նախատում է կենդանի Աստծու զորքերին»

  Դավիթը չասաց. Ինչո՞ւ է նա ինձ նվաստացնում, կամ Ինչո՞ւ է նա ինձ սպառնում

  Նա ասաց. «Ո՞վ է նա, որ Աստծուն է նախատում»

V. ԻՆՉՈՒ ՀԻՆԳ ՔԱՐ

Գողիաթն ուներ չորս եղբայր (Բ Թագ. 21.15-22)

Դավիթը պատրաստ էր հաջորդ մարտերին

- *Այսօրվա հաղթանակը չի նշանակում վաղվա պայքարի ավարտ:*

  50 *Դավիթը քարով ու պարսատիկով այսպես հաղթեց փղշտացուն, զարկեց փղշտացուն և սպանեց նրան, բայց Դավթի ձեռքին սուր չկար:*

  Այն Աստվածը, որ ինձ ազատեց անցյալում, կազատի ինձ նաև այսօր: Այս հսկան պիտի մահանա:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ